

Ղուկաս 14:28-30 (Luke 14:28-30)

«Ու՞ր Պիտի Ըլլաս»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 01.07.96

Ահա այս Կիրակի Նոր Տարուայ առաջին պաշտամունքն է որ կունենանք: Այս Առաւօտ ապագան նկատի պիտի առնենք: Ըսուած է, «*եթէ չես գիտեր ու՞ր կ'երթաս, հաւանական է որ ըլլաս տեղ մը որ պիտի չուզէիր ըլլալ*» Արդեօք, տարի մը ետք ի՞նչպիսի կեանքեր պիտի ունենանք:

Եթէ կեանքի մէջ յաջող ըլլալ կուզենք, պէտք է ծրագիր ունենանք, նպատակակէտ ունենանք, պէտք է չանք ընենք ժամանակը ծախու առնենք և քննենք մեր վերելքը: Մեր քայլերը մի առ մի առնենք հասնելու համար մեր նպատակին:

Արդիօք նոյնը չ'է հոգեւոր կեանքը. միայն եկեղեցի գալով հոգեւորապէս չենք անիր, հապա՛ նոյնպէս պէտք է ծրագրենք և նպատակ ունենանք մեր հոգեւոր կեանքին մէջ: Պէտք է նուիրուինք թէ ժամանակը ծախու առնելով և թէ չանալով որ հասնինք մեր նպատակակէտին:

Ղուկաս 14:28-30 - 30ի մէջ Տէր Յիսուս կ'ըսէ, «*Վասնզի ձեզմէ ո՞վ եթէ աշտարակ մը շինել ուզէ, առաջ չի նստիր ու հաշիւ ընէր ծախքը, նշոյնիւ համար թէ զանիկա լմնցնելու կարողութիւն ո՞ւնի. որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ ու չկրնայ լմնցնել, բոլոր տեսնողները սկսին զինք ծաղրել և ըսել թէ այս մարդը սկսաւ շինել ու չկրցաւ լմնցնել:*» Պօղոս առաքեալ կ'ըսէ Ա. Տիմոթէոս 4:7ին մէջ, «*Բոլոր անձի աստուածաշտութեան վարժեցուր:*»

Այս Նոր Տարուայ առթիւ, կարեւոր է որ գիտնանք թէ ո՞ւր պիտի ըլլանք տարի մը ետք և թէ ինչպէ՞ս հոն պիտի կրնանք հասնիլ:

Ի՞նչ նպատակակէտեր պիտի որոշենք մեր հոգեւոր կեանքին համար. ինչպէ՞ս պիտի կարենանք ինքզինքնիս վարժեցնել որ ստանանք լաւագոյն վարձքը:

Երբ թելադրութիւններ պիտի ընեմ որ օգտագործենք հոգեւոր անուր:

Առաջինը՝ աղօթք է: Կարելու է հաղորդակցիլ Տէր Յիսուսի հետ: Որքան ժամանակ կը տրամադրենք օրական Տիրոջ հետ խօսելու և զԱյն մտիկ ընելու համար: Այս տարի, կրնանք աւելի ժամանակ յատկացնել աղօթքի թէ անձնական և թէ ընտանեկան: Ջանք ընենք նաեւ աղօթելու ուրիշ հոգեւորներու հետ:

Երկրորդը՝ Աստուածաշունչի սերտողութիւն է: Ինչպէ՞ս պիտի գիտնանք Աստուծոյ միտքը երբ չենք կարդար Իր խօսքը: Միայն Կիրակի օր քարոզ մտիկ ընելով չենք ստանար այն բոլորը որ Աստուած կուզէ հաղորդել մեզի: Պէտք ունինք կանոնաւոր կերպով Աստուածաշունչը սերտել: Նպատակ ունի՞ր կարդալ և սերտել Աստուծոյ խօսքը: Կը հանախե՞ս Սուրբ Գրքի սերտողութեան խումբ մը, անձ կը կա՞յ որու հետ Աստուծոյ խօսքին լոյսով կրնաս ֆննել կեանքդ:

Երրորդը՝ ծառայել է: Մեր նկարագիրը կը կերտուի երբ Աստուծոյ նշմարտութիւնը ներգործենք մեր կեանքին մէջ: Երբ վստահինք Աստուծոյ և կատարենք ինչ որ կը հաւատանք, Իրմով կանինք ամէն օր:

Եթէ կուզես անիլ հոգեւոր կեանքի մէջ և հասնիլ Յիսուսի հասակին, սկսէ՛ ծառայել Իրեն: Որոշէ՛ ինքզինքդ նուիրել ծառայութեան մը եկեղեցիէն ներս - մէկ տարուայ համար: Վստահ եղիր որ կեանքդ պիտի փոխուի:

Տարի մը ետք ու՞ր պիտի ըլլանք իւրաքանչիւրս. թո՛ղ Տէրը օրհնէ քեզ երբ ալ աւելի կը մօտենաս Իրեն: